Բ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՕԳՈՍՏՈՍ 1 1892 ԹԻՒ 15

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԱՄՍՈՑ 1ԻՆ ԵՒ 15ԻՆ

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2. թալէր կամ 10 ֆրանք։

Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն։

Entered as second-class mail matter. at P.O.NewYork. NY

ՌՈՍԸՆԴՐԿՈՒԹԻՒՆ

Կենսագրական. Մկրտիչ Խրիմեան. — Հայաստանի ծրգ նաժամն. — Ծանր Խռովութիւնք Հայաստանի մէջ. — Տալլորիկցի Կտրճի Քայլերգը. — Հնչակ— Հայք—Սռածներ —Այլ և այլք

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆ

Ա.

ԽՐԻՄԵԱՆԻ երկար կենաց և գործունէութեան պատմութիւնն կուգամք տալ մեր ընթերցողաց, և պիտի ջանամք տալ զայն առանց երկար խօսելու։(1)

Մկրտիչ Խրիմեան ծնեալ է ի Վան, ի 16 Ապրիլի 1820։ Դեռահասակն Մկրտիչ կը կոչուէր Կրըմցւոց Մըկրտիչ։

Կրըմցւոց Մկրտիչ մինչև Խրիմեան Հայրիկ լինելու համար շատ դաստիարակութիւն առած, բազում արդիւնք տուած և մեծամեծ նեղութիւններ կրած է։

Նորա դաստիարակութեան հիմնադիրն եղաւ հօրեղբայրն Խաչատուր, որ ուսոյց նմա ամեն ինչ որ այնժամու Հայաստանի ուսումնական Հայերն կրնային գիտնալ—կարդալ և գրել, փոխ ըսել, շարական երգել։ Տղայ Մկրտչին ընտանեկան կրթութիւնն լոկ ուսում չէր, այլ ճշմարիտ դաստիարակութիւն իմացական, բարոյական, ֆիզիքական և արհեստական։ Նա ոչ միայն կարդացող այլ և բարի, գթած, հնազանդ և աշխատասէր տղայ էր։ Ցաճախ կ'արածէր ընտանեկան գառանց և խոյոց փոքրիկ հօտն ի մարգս և ի մարմանդս Վանայ. և երբ քիչ մ'աւելի մեծցաւ, սովրեցաւ իւր հօրեղբօր արհեստն, այն է կաւ գործել։ Բաց այսի, նա պարտիզպանական վարժութիւններ ևս ուսաւ. սովրեցաւ պատուաստ ընել, տունկեր անկել և խնամել, և որ ի կարգին։

Տարակոյս չկայ թէ Մկրտչի այդ ընտանեկան բազմակողմանի դաստիարակութիւնն աւելի հզօրապէս ազդած է նորա ապագայ բոլոր կենաց վերայ քան այժմու դպրոցական կրթութիւնն կարէ։

Մկրտչի երկրորդ և բուն ուսումնական վարժապետն եղան Լիմ և Կտուց անապատներուն վանականք, առ ոտս որոց աշակերտեցաւ նա պարապելով գրաբար լեզուի և հայ հին գրականութեան ուսումնասիրութեամբ։ Երիտասարդ Խրիմեան այսպէս եղաւ այնչափ ուսեալ և գրաբարի ներկուռ որչափ սակաւք միայն ի քաջ վարդապետաց էին։

Մկրտիչ կը մտածէր պանդխտել· բայց զիջանելով մօրն թախանձանաց՝ նախ ամուսնացաւ, և ունեցաւ մի դուստր, զոր անուանեց Թագուհի։

Խրիմեան թողլով զՎան գնաց ի Պարսկաստան և անտի ի Ստամպոլ։

Ի Կ. Պոլիս Խրիմեան ելաւ յասպարէզ ուսուցչութեան, և երկար տարիներ կոչուեցաւ նա Մկրտիչ վարժապետ Խրիմեան։

Զեմք յիշեր «բաղմավէպ»ներու որ հատորին մէջ կարդացած եմք Մկրտիչ վարժապետ Խրիմեանի մէկ քերթուածն գրաբար, որով նա կը շնորհաւորէր զՀ. Ս. Բագրատունի իբրև նախնեաց բուն քերթողական չափուց վերանորոգիչ։

Խրիմեան հասարակ վարժապետ չէր· նա համբաւեալ էր իբրև քաջ քերթող, մանաւանդ յետ հրատարակելոյ ի Կ. Պոլիս իւր երկու բանաստեղծական երկասիրութիւններն—զՀՐԱՒԻՐԱԿ ԱՐԱՐԱՏԵԱՆ և զՀՐԱՒԻՐԱԿ ԱՒԵՏԵԱՑ ԵՐԿՐԻՆ։

Խրիմեան ունէր նաև հայրենասիրի համբաւն· նա իւր Կ. Պոլսոյ բարեկամաց հետ— և բարեկամ էին նմա Պալեանի և Օտեանի պէս մարդիկ— անսպառելի աւիւնով կը խօսէր Հայաստանի վերայ, զՀայաստան լուսաւորելու և խնամելու վերայ։

Բ

Հայրենասէր Խրիմեան կարօտցած էր զՎան և զՀայաստան· ուստի անդ գործելու նպատակաւ մեկնեցաւ մայրաքաղաքէն և վերադարձաւ ի Վան ի վերջկոյս 1853 թուականին։ Իւր կին մեռած էր, մեռած էր նաև իւր դստրիկ։ Վարժապետն որոշեց լինիլ վարդապետ, և ունենալ գործունէութեան լայնագոյն ասպարէզ· ուստի վարդապետ ձեռնադրուեցաւ ի 26 փետրուարի, 1854, ի Վանս Աղթամարի, և նշանակեցաւ միաբան Վարագի վանուց։

Խրիմեան վարդապետի իղձն էր զԱղթամար կամ զՎարագ վերածել ի վառարան ազգային լուսաւորութեան· նոր իմն Վենետիկ, նոր իմն Ս. Ղազարու վանք ստեղծել հայրենեաց կեդրոնին մէջ· տպարան հաստատել, իմացական ժիր գործունէութեան շրջանի մէջ մուտ-

(1) Տես աւելի ընդարձակ տեղեկութեանց համար Խ. Մալումեանի «ԽՐԻՄԵԱՆ Կենսագրական Տեսութիւն»ն ի իր գործն։

ծանել վանականներն։ Խրիմեան կը խօսէր և յոյլ և հեղգ վարդապետաց ականջին ջրի ձայն կուգար. ոչ ոք համակրեցաւ նմա, ուստի ստիպուեցաւ երթալ միւսանգամ ի Կ. Պոլիս և անդ իւր ազդեցիկ բարեկամաց աջակցութեամբ գնել Մամուլ և ամենայն պատրաստութեամբ և հզօր յանձնարարութեամբք զինեալ վերադառնալ։

Խրիմեան այդ բոլոր պատրաստութիւններ կատարեց երկու տարուան մէջ ի Պոլիս և 1856ին վերադարձաւ ի Վան։

Ոչ Աղթամարի և ոչ Վարագայ մէջ կրցաւ սակայն Խրիմեան գտնել անկիւն մի ուր դնէր իւր մամուլ և սկսէր գործն։ Վանականք ապառաժային պնդութեամբ կը դիմադրէին նմա։ Հնար չեղաւ նմա գործի սկսիլ մինչև որ շնորհիւ ազդեցիկ բարեկամացն որ ի մայրաքաղաքին՝ անուանեցաւ Վարագի վանահայր։

1857ին յաջողեցաւ Խրիմեան հիմնարկել Վարագի մէջ չորս նորօրինակ ազգային հաստատութիւններ.—

Մէկ ժառանգաւորաց դպրոց, ուր հաւաքելով դաստիարակել սկսաւ նա պատանիներ և երիտասարդներ իբրեւ վարժապետաց և վարդապետաց։

Մէկ տպարան։

Մէկ ամսաթերթ կամ Հանդէս, ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ անունով։

Մէկ թանգարան ուր հին գրեան և այլ հայկական հնութիւններ հաւաքեց.

Այս նորատունկ հաստատութիւններ անխոնջ աշխատութեամբ զարգացոյց մինչեւ 1862, երբ Տարօնի առաջնորդ և Ս. Կարապետ վանուց վանահայր կարգուեցաւ նա Պոլսոյ կեդրոնական վարչութենէն։ Մշու Սուլթան Ս. Կարապետ վանքն մեծահռչակ և մեծահարուստ վանք մ'է, ինչպէս գիտէք։ Այդպիսի վանքի վանահայրութիւնն ընդունիլ՝ ընդարձակագոյն գործունէութեան ընտիր պատեհութիւն մի ընդգրկել էր. Խրիմեան ըստանձնեց ուրեմն այդ նոր պաշտօներ՝ պահելով հանդերձ Վարագի ղեկավարութիւնն։ Վարագեան հաստատութեանց խնամքն յանձնեց իւր զարգացեալ աշակերտաց, և ամեն ինչ որ հարկաւոր էր Ս. Կարապետի մէջ ևս նմանօրինակ հաստատութիւններ հիմնելու համար՝ առնելով ի միասին չուեց գնաց ի Տարօն։

Արդարև Ս. Կարապետի մէջ հիմնեց ժառանգաւորաց դպրոց մի, տպարան մի, ուր սկսաւ գրքեր տպագրել, և ևս ամսօրեայ հանդէս մի ԱՐԾՈՒԻԿ ՏԱՐՕՆՈՑ անուամբ։

Կերպարանափոխած էր զՎարագ, կերպարանափոխեց նաև զՍ. Կարապետ։ Թէ անդ և թէ ասա Խրիմեան հայ իմացական կեանքն վերածնող եղաւ և բազմաթիւ սերունդ արտադրեց։

Մինչև ի վերջոյս 1864 թուականին Խրիմեան յաղթանակօք շարունակեց իւր գործեր ի Վարագ և ի Ս. Կարապետ, և իւր բազմարդիւն հայրենասիրութեան համբաւն Հայ Աշխարհի ամեն կողմ հռչակեցաւ։ Կը յիշեմք կարդացած լինիլ Արմենակ Հայկունի Ճիզմէճեանի «Մուսայք Մասեաց»ին մէջ մաւնաւոր յօդուած մի որ զԽրիմեան Մկրտիչ վարդապետ իբրեւ գերազանց ազգասէր կը ներբողէր, և անշուշտ այն նմոյշ միայն կրնայ սեպուիլ ժամանակին հանդուգնատիպ գովաբանութեանց։

1864էն սկսեալ Խրիմեանի թշնամիք յաջողեցան խոչընդոտնել նորա յաղթական ընթացքն մինչեւ 1869, երբ նա Պատրիարք ընտրուելով թողուց զՏարօն և գընաց վարել ազգապետի փափուկ պաշտօնն։

Խրիմեանի մեծ, դիւթիչ անունն ինքնին շատ գործ կատարեց. վտանգեալ Սահմանադրութիւնն փրկուեցաւ կորստենէ. պատրիարքարանի ճմլիչ համեմատութեանց հասած պարտքն վճարուեցաւ հանգանակութեամբ, պաշտօնական զեղծմունք ազգային կեդրոնէն վերցան, դաւառային հարստահարութեանց դէմ կանոնաւոր և երկարօրէն մանրամասնեալ թագրիրներ տրուեցան Բ. Դրան։ Խրիմեան պատրիարք չարաչար աշխատեցաւ անխոնջ համբերութեամբ և հայրական սիրով։ Նա ճշմարիտ պատրիարք մ'եղաւ։ Բայց թշնամիք վերջապէս յաջողեցան զնա ձանձրացունել այնքան որ վչտացեալ հրաժարեցաւ պատրիարքական աթոռէն ի15 Օգոստոսի 1873։

Գ

Խրիմեան ոչ ևս էր պատրիարք տաճկահայոց, բայց կը մնայր Հայրիկ ամենայն հայոց և կը գործէր չարունակ, կը գրէր, կը խրատէր ու կը սիրէր։

1878ին իբրև դլուխ հայ պատուիրակութեան դնաց Խրիմեան յԵւրոպա, ուր մեծ պետութեանց դահլիճներուն առջև փաստաբանեց Հայաստանի դատն, այն ժողովրդեան դատն որոյ հետ իւր յարաբերութիւնն էր ճիշդ անձնդիր հովուի յարաբերութիւնն հօտին հետ։ Արևելեան նահապետի երևոյթն, մեծ եկեղեցականի պատկառելի դէմքն, հովուական ցուպն և հայրական դորովոյ խօսքեր չազդեցին բաւական այն քաղաքագիտաց աշխարհին ուր ոսկին այնքան յարգի է և թնդանօթն այնքան պերճախօս, և Հայրիկ տխրամած վերադարձաւ դաշնագրոյն 61դ յօդուածն միայն սատացած։

1879ին կրցաւ նա վերադառնալ ի Վան, յետ տասնամեայ բացակայութեան։ Սովն իբրև տուռնն այն սոսկալի հրէշի որ պատերազմ կը կոչուի կը սպառնայր զժողովուրդն կոտորել։ Հայրիկ փրկեց զնոսա այդ կոտորածէ։

Բաւական չէ ոսկայն սովի ատեն հոց ջամբել, պէտք է ապագայ սովի և աղքատութեան առջեւն առնուլ։ Այդ նպատակաւ Խրիմեան Հայրիկ հիմնեց Վարագի մէջ երկրագործական վարժարան մի։ Այդ ալ իւր տեսակին մէջ առաջին հաստատութիւնն էր Հայաստանի մէջ։

1885ին կառավարութեան հրամանաւ ստիպուեցաւ Խրիմեան թողուլ զՎասպուրական և երթալ ի Կ. Պոլիս։ Բ. Դուռն որոշած էր գլուխն բաժնել մարմինէն,—թողուլ որ ցնցեալ չարչարուի ոտնակոխ և գլխատեալ Հայաստանն։

Օսմանեան մայրաքաղաքին մէջ մնաց Հայրիկ վեց տարի իբրև յաքսորի։ Բայց կային և անդ զաւակունք Հայաստանի, դաղթականաց բազմութիւն որք իբրև ոչխար կը ճանաչէին իրենց հովուի ձայնն. ուստի Պալատն հարկ ունեցաւ աւելի հեռուն աքսորել զԽրիմեան. և հրաւիրեց զնորին սրբազնութիւն երթալ յուխտ յԵրուսաղէմ...։ 1891ին դնաց նա ուխտի ի ս. քաղաքն, յորմէ դեռ չէ վերադարձած։

Բայց այդ վանդակի մէջ փակեալ Արծիւն սրատես աչօք դորովալիր կը նայի միշտ Հայրենեաց, ինչպէս և բոլոր զաւակունքն կը նային ի նա, զգալով նորա սիրափետուր թեւոց հովանին աշխարհի ամեն կողմ։ Ի՞նչ զարմանք եթէ անցեալ Մայիսի 15ին աշխարհի ամեն կողմէն յէջմիածին ժողովեալ հայ պատուիրակք զՀայրիկ միաձայնութեամբ ընտրեցին կաթողիկոս ամենայն Հայոց։

Դ

Արդ և կարճ ի կարճոյ պատմեցինք Խրիմեան Հայրիկի գործերն։ Ամեն ընթերցող կը մտածէ անշուշտ թէ տպարան, ճեմարան, թանգարան, հանդէս հիմնել Հայաստանի ներսն՝ նորութիւններ մուծանել է անդ, բայց սակաւք կանդ կ'առնուն խորհելու թէ դոքա հրաշագործութեանց կարդէն եղող գործեր են։

3000 տարի անցած էր յորմէ հետէ մեր թագաւորք Վանի ապառաժներուն վերայ արձանագրել տուած էին այն հին դարուց սեպագիր գրերով յիշատակարաններ. 1400 տարի անցած էր յորմէ հետէ Մեսրոպ և իւրքն բուն հայ գրովք սկսած էին գրել մագաղաթի վե-

բայ · 400 տարի անցած էր յորմէ հետէ Եւրոպա սկսած էր վայելել տպագրութեան սքանչելի գիւտին ծառայութիւններն ։— Հայաստան բաւական ի մօտոյ հետեւած էր հին դարուց քաղաքակրթութեան, այլ կը մնար իբրև անդամալոյծ երբ նոր ազգեր հսկայաքայլ կը յառաջդիմէին ։ Մամուլն իբրև ճրագ արեգակնափայլ իւր յորդառատ լոյս կը սփռէր յԵւրոպա, և միայն աղօտ նշոյլներ կը թափանցէին Հայաստանի հովտաց մէջ ։ Ժողովուրդն Արարատի կը նստէր ի խաւարի ։ Եկաւ Խրիմեան և ըսաւ— Մամլոյ ճրագն պէտք է տնկել Արարատի բարձանց վերայ իսկ որպէս զի Հայոց աշխարհ լուսաւորի իբրև զԵւրոպա ։ — կը մոլի՛ս, վարդապետ, ըսին նմա ։ —Այո՛, կրկնեց անդուլ Խրիմեան, այո՛, մամուլ պիտի տանիմ ի Հայաստան ։ Եւ տարաւ ։ Եւ երբ Վարագայ մէջ առաջին անգամ ճռնչեց մամուլն հայ բազկաց ուժով, երբ Արծուի Վառպուրակաին առաջին թիւն դուրս եկաւ մամլէն, յայնժամ ոսկերք Մեսրոպայ խայտացին ի գերեզմանի ։— յայնժամ նոր դար մի սկսաւ մեր հայրենեաց համար ։

Փորձառուներ միայն կրնան երեւակայել թէ այդ ձեռնարկութիւններ յաջողցունելու համար —տպարան, ճեմարան, հանդէս և թանգարան հաստատելու և պահպանելու համար—ո՞րպիսի նիւթական դժուարութեանց յաղթել պէտք է քաղաքակիրթ կեդրոնի մէջ անգամ, իսկ երբ Հայաստանի լերանց մէջ, ի ծոցի անդ Վարագայ, հաղորդակցութեան բոլոր քաղաքակիրթ միջոցներէն զուրկ տեղ մի այդպիսի հիմնարկութիւններ ի գլուխ հանելու վերայ է խնդիրն, յայնժամ դժուարութիւնք զհասարակ մահկանացուն յառաջին քայլախոսի անդ կը կործանեն անյարիր ։

Խրիմեան դիւցազն մ'էր, սակայն, և կրցաւ արգելքներու լեռներն տապալել ի բաց և երթալ յառաջ տարիներով ։

Հանգոյն ժրաջան մեղուի որ իւր փեթակի համար մեղր և մոմ կը շինէ, կը թռչէր կ'երթայր նա երկրէ յերկիր նոր հիւթ ժողովելու և լիացած կը վերադառնայր ։

Առաջին երկար պատրաստութիւններէն յետոյ զորբս կատարեց 1854էն 1856 ի Կ · Պոլիս, Խրիմեան ստիպուեցաւ բաղում անգամ թողուլ զՎարագն և երթալ ի խնդիր դրամի · 1858ին գնաց ի Կ · Պոլիս և նոր մամուլ մի բերաւ · 1860ին գնաց ի Կովկաս դրամ հաւաքել ուստի անցաւ նաև ի Պարսկաստան ։

Դրամի՛ նեղութիւնն չէր սակայն մեծագոյնն ։

Խրիմեան բաղում թշնամիներ ունէր · ոչ Թուրք կամ Քուրդ, այլ հայազգի թշնամիներ, ազգասէր կոչուած թշնամիներ · ազգային գործիչ համբաւեալ թշնամիներ ։ Նորա թշնամեաց քան զամենայն կատաղիք և անզգամք էին վանական վարդապետք։ Թշնամի կ'ըսեմք, ոչ հակառակորդ, քանզի նոքա Խրիմեանի գաղափարաց ձեռ համաձայնիլ չկրցող և տարբեր սկզբունքի ծառայող մարդիկ չէին, այլ նորա լուրջ, անաչառ, բարեկարգիչ, անձնուէր ընթացքէն վախցող կամ խորշող նը ուատ արարածներ էին անձնական շահէ և նախանձէ առաջնորդեալ ։

Երբ վարդապետ ձեռնադրուեցաւ, վանականք թոյլ չտուին նմա գործել մինչև որ Վարագայ վանահայր կարգուեցաւ ։ Այնուհետև սկսան զրպարտել զնա, այնպէս որ 1858ին, 1865ին, 1866ին ստիպուեցաւ Խրիմեան երթալ ի Կ · Պոլիս և ինքզինք արդարացունել ։ Երբ 1860ին գնաց յԷջմիածին որպէս զի կաթողիկոսէն կոնդակ առնու ի Կովկաս հանդանակութիւն ընելու նպատակաւ, վանականք արգելք եղան, և վերջապէս կոնդակն տրուեցաւ ազդեցիկ աշխարհականաց ոմանց միջնորդութեան շնորհիւ ։ Երբ Խրիմեանի յանձն եղաւ նաև Ս · Կարապետի վանահայրութիւնն հանդենձ առաջնորթեամբ Տարօնոյ, յայնժամ թշնամիք կրկնապատիկ կատաղութեամբ իրենց բոլոր ճիգ թափեցին զնա տապալելու, և առ այդ նպատակ իրենց զգիր գործին էր զբրպարտութիւնն ։ Վանականք չուզելով յայտնի ցուցնել իրենց դարանագործ ձեռք, մերթ Հայեր և մերթ Քրդեր գործածեցին ։ Համբարձումի ումեմն տուին 1000 դահեկանի մուրհակ, և կօշկակար Յակոբի ումեմն եւս 1000 դահեկանի մուրհակ, պայմանաւ որ նոքա բողոքեն Խրիմեանի դէմ ։ Յանդգնեցան մինչև իսկ ամբաստանութեամբք լի հանրագրութիւն մի սարքել տալ ժողովրդեան՝ խաբելով թէ հանրագրութիւնն Զէրքէզներու դէմ է ։

Զրպարտութեանց երկար շարքին մէջ անմիտ և անհեթեթ բաներ չեն պակսիր ։ Երբեմն ըսին թէ Խրիմեան կուռք կը պաշտէ · (քանզի նա մետաղեայ հին հայ կուռք մի ձեռք ձգած և դրած էր Վարագայ թանգարանին մէջ ։) ամբաստանեցին զնա իբրև գող, հռչակելով թէ խաչեր և աւետարաններ գողցեր է վանքէն ։ Վերջապէս չարամիտ և ազդուագոյն ամբաստանութիւն մ'ալ յաճախ կարկատեցին և կրկնեցին իբր թէ Խրիմեան անխոհեմութեամբ ժողովրդի շահերն կը վտանգէ, կառավարութեան հակառակ սկզբանց կը ծառայէ, և այսպէս ջանացին Բ · Դրան կասկած ներշնչել դէպ ի Հայաստանի կրթիչն ։ Երբ պատրիարքական գահն ամբարձաւ նա, թշնամեաց այնպէս թուեցաւ թէ իրենց գըլխուն վերայ կոխեց · և իբրև կարիչ սկսան խայթել չարաչար, և յետոյ ժպրհեցան այլանդակ զրպարտութիւններ հրատարակել իլրագիրս Նորին Սրբազնութեան դէմ։ Այն որուն համար վանականք ժպրհած էին ըսել թէ խաչեր գողցեր էր, Պոլսոյ մէջ ալ ամբաստանեցաւ իբրև ազգին ստակն վատնող և մասնաւոր դումարներ ալ կոկորդն անցունող ։

Պոլսոյ սուտ ազգասէրներն գրչաւ կ'ուզէին խոցել զնա, ինչպէս Հայաստանի վանականք աւելի բարբարիկ զինուք ։ Ամեն ոք գիտէ այն դէպքն յորում Քուրդ մի, կաչառեալ, չկրնալով փորձել սպաննել զԽրիմեան, դողալով ինկաւ նորա ոտքն և ներում խնդրեց ։ Ուրիշ Քրդեր ալ վարձուեցան նոյն վախճանաւ, և շատ անգամ Խրիմեանի սենեակի շուրջ, գիշերայն, հրացան կ'արձակէին բարբարոսք ։ Միանգամ Քրդային վարձեալ խումբ մի ցերեկ ատեն դէմն ելան Հայրիկի ։ Վանահայր Խրիմեան Ս · Կարապետ վանքն կը վերադառնայր օր մի, և ահա գտաւ վանքին դռներն իւր դէմ փակեալ ։ Զինեալ Քրդեր կը պահէին դուռն ։ Յանդգնութեան այս աստիճանն աներևակայելի էր ։ Վանականաց ապստամբութիւնն էր այն ընդդէմ վանահօր ։ Մշի ժողովուրդ լսեց, բազմութիւն եկաւ վանքի դռներն բռնի բանալու, և սկսաւ կռիւ ընդ մէջ Հայոց և զինեալ Քրդացն ։ Հայրիկ աղաչելով դադար տուաւ կռուին, և ի սէր խաղաղութեան չուեց գնաց ի Կարին և անտի ի Կ · Պոլիս ։ Բազում քննութիւնք կատարուեցան և վանականաց չորս գլխաւորներն աքսորուեցան իբրև յանցաւոր ։

Ն

Կոյր առաջնորդք, վատասիրտք և խաւարասէրք, հեղգ և պղերգ կղերք մերժեցին զԽրիմեան, անհաշտ և անխիղճ թշնամի եղան նմա, բայց հասարակ ժողովուրդն ճանաչեց զնա իբրեւ մեծ ոմն յորում մարգարէի, հայրապետի, դիւցազնի հոգի կայ ։ Ժողովուրդն ՀԱՅՐԻԿ մականուանեց զնա վասն զի զգաց նորա Հայրական անձնուէր ջերմ սէրն և սիրեց զնա փոխադարձ սիրով ։

Պարզ ժողովուրդն յաճախ ուաւ իւր սիրող և սիրեցեալ Հայրիկի սիրալիր սքանչանաց ապացոյցներ ։ 1869ին երբ նա պատրիարք ընտրուելով ողջոյն հրաժեշտի տուաւ իւր զաւակաց, Տարօն բոլոր ցնծացաւ անպատում խանդավառութեամբ յուզարկել զնա ։ Կառավարութիւնն անգամ վաշտ մի զօրք յղած էր մեծ վար-

դապետն հանդիսաւորապէս ճամբայ դնելու համար։ Մուշէն և շրջակայքէն հազարաւոր հեծեալ և հետի Հայեր ժողովուած էին, և երկար ճամբայ գնացին զՀայրիկ ուղարկելու, նորա օրհնութիւնն առնելու, նորա սուրբ աջն համբուրելու։ Երբ վերջապէս կանգ առին և հեռացող Հայրիկին նայեցան, հազարաւորաց ձայնն գոչեց ետևէն—Հայրիկ, չմոռնաս տղաքդ, չմոռնաս Տարօնն..։ Դէպ ի մայրաքաղաքն նորա ուղեւորութեան բոլոր գծին վերայ գիւղեր, աւաններ, քաղաքներ ոտքի կ'ելնէին, կանայք և մանկունք իսկ կ'երթային տեսնել Հայրենեաց հայրիկն մօտէն կամ հեռուէն։ Երբ հասաւ նա ի Թրապիզոն, Հայ, Յոյն, Թուրք ներկայացուցիչք գնացին դիմաւորել զԽրիմեան, և հիւպատոսք ի նշան մեծարանաց պարզեցին իրենց դրօշակներ։ Կեդրոնական կառավարութիւնն մինչև ի Թրապիզոն յատուկ շոգենաւ յղած էր զԽրիմեան բերելու. երբ նաւն ի Պոլիս հասաւ, պարզեց իւր դրօշ, ինչպէս սովորութիւն է երբ մեծ մարդ կուգայ։ Մայրաքաղաքին հայ հասարակութիւնն անհուն հեղեղի մի նման հոսած էր դէպ ի Հայրիկ դէպ ի ծով, և բովանդակ Ստամպոլն թնդաց նոցա կեցցէներու ցնծագին աղաղակներով։ Պատրիարքութեան հաստատմանէն ի վեր երբէք այնպիսի երևոյթ տեղի ունեցած չէր։

Ինչպէս ակնարկեցինք, ոչ միայն Հայք այլ և օտարազգիք սքանչացած են Խրիմեանի։ Նոյն իսկ Հայաստանի Քրդերն իրենց բարբարիկ պարզմտութեամբ ճանաչեցին, զգացին մանաւանդ Խրիմեանի մեծութիւնն։ Վանի սովի ատեն հաց բաշխեց նա ոչ միայն Հայոց այլ և Քրդաց և Թրքաց։ Հայեր կ'ըսէին նմա թէ պարտէր համարիւն եղբարց օգնել և թողուլ որ Քրդեր սատակին սովամահ։ Խրիմեան մարդասէր ցուցուց զանձն ինչպէս նաև ազգասէր, և իւր լուսաւոր ընթացք շարունակեց առանց վարանելու— գթաց և օգնեց այլազգեաց եւս։

Հասարակ Քուրդք և ցեղապետքն ընկալան զԽրիմեան իբրև սուրբ, և կերդնուին նորա անուամբ։ Երբ Հայրիկ կ'ուղեւորէր, Հայոց հետ Քրդեր կ'երթային դիմաւորել զնա իբրեւ հայր հասարակաց։

Այո՛, Խրիմեան հայ գիւցազն մ'է. մեր ազգային 3,000 տարուան պատմութեան մէջ երեւցող առաջնակարգ աւագ դէմքերու մին է Խրիմեան Մկրտչի դէմքն։ Նորա գործերն, տպարանն, թերթն, դպրոցն թանգարանն, երկրագործական վարժարանն նորութիւններ եղան ի Հայաստան, այլ սքանչելագոյն նորութիւնն նոյն ինքն Խրիմեան է։ Մեծ են նորա արդիւնք. մեծագոյն և'ս է ինքն։ Նա աւելի մեծ հրաշալիք մ'է քան նորա բոլոր ազգային ձեռնարկք և հաստատութիւնք։

Հայեցէք, Հայեր, ի թռչունն Վասպուրական և ըսքանչացէք։ Նա իբրև ծաղ կը ճռուողէ ու կը թռչտի Վանայ առուակաց եզերքն, կ'ոստոստէ ճիւղէ ի ճիւղ և տանիքէ ի տանիք, կը մեծնայ, կը մեծնայ և աւերակաց կոյտեր կը յուզէ, կը սաւառնի բլրէ ի բլուր, կը ճախրէ ի բարձունս հայրենի լերանց, և մինչեւ մերձ յԱրեզն և յաղբիւր երկնային լուսոյ, կ'երթայ վերջապէս զբոյն իւր առաջին դնել Վարագայ զառ ի թափին վերայ, և կը հանէ ծագեր ուր սողունք վնասակարք միայն կը զեռային ցայնվայր։ Այդ սրատես և արագասլաց թռչուն, Արծուի Վասպուրականն է այն — Մկրտիչ Խրիմեան ԽՄԲԱԳԻՐՆ է այն։

Հայեցէք, Հայե՛ր, ի մուսայն, որ քնար ի ձեռին կ'երգէ իւր ազգի անցեալ փառքն ու փայլք. կ'ողբայ ներկայի աղէտք ևս անհուն. կ'երգէ ու կ'ողբայ աչքն յերկին յառած, աչք միշտ յուսափայլ. ի լուր նորա քընարին ամեն Հայու սիրտ յուսով կը արոփէ։ Այդ երկնազգեցիկ մուսայ, Մկրտիչ Խրիմեան ԲԱՆԱՍՏԵՂԾՆ է այն

Հայեցէք, Հայե՛ր, չունչ մ'երկնային կը շնչէ չոր ոսկերօք լի հայ դաշտաց, և ահա շարժումն կը լինի, ոսկր առ ոսկր մերձենալով կը յօդի, ջիլ՝ մարմին և մորթ կ'առնու, չունչն այն չարունակ կը շնչէ և ոսկերք կեանք առած կ'ելնեն իրր ժողովուրդ կենդանի. նա որ կը շնչէ այդ չունչ՝ նոր Լուսաւորիչ մի, նոր Մեսրոպ մի, Մկրտիչ Խրիմեան ՎԱՐԴԱՊԵՏՆ է այն։

Զ

Հարցէք այժմ, սքանչացեա՛լ որդիք, թէ ուստի՞ է Հայրիկին այդքան զօրութիւն, այդքան մեծութիւն.

—Խրիմեան Հայրիկ անսովոր ընդունակութեամբք, բարձր տաղանդներով օժտեալ է անդստին ի ծնէ։

Խրիմեան Հայրիկի բարոյական բնութիւնն ընդունակ եղած է քրիստոնիական երկնային հոգիէն ներշնչուելու. նա քրիստոսի օրինակին և ոգւոյն հետևելով եղած է տիպար քրիստոնեայ։ Քրիստոնեայ լինիլ քրիստոսի նման լինիլ է, ոչ թէ աստուածաբանութիւն գիտնալ։ Եւ քրիստոսի նմանիլ արդէն դիւցազնց դասուն վերաբերիլ է։ Խրիմեան ունեցած է առատօրէն ի խորս հոգւոյն այն զօրութիւններէ որք հզօրագոյն են քան զուժանակ — հաւատ յոյս և սէր երկնաշունչ։

Խրիմեան տիպար քրիստոնեայ և տիպար Հայ է։ Նա կեդրոնացուցած է յանձին հայութեան բոլոր ուժն։ Նորա հայութիւնն զօրութեան աղբիւր մ'եղած է ի ներքըս իւր։ Անման ուրիշ կարգ մի նշանաւոր Հայերու, Խրիմեան ծնած է Հայաստանի մէջ, ի Վան, սնած և մեծցած է Վասպուրականի մէջ մինչև ցչափահասութիւն. նա հօրեղբօրմէն զատ ունեցած է ուրիշ դաստիարակ մի, պերճախօս և ներշնչող դաստիարակ մի —զՀայաստան աշխարհ։ Նա յաճախ այցելած է զՎարագ, զՀոգւոց վանք, զԱղթամար, զԷջմիածին, զԿոմկաս, զԿիլիկիա։ Տեսած է նա հայ թագաւորաց և իշխանաց, հայրապետաց և մատենագրաց, զօրավարաց և քաջաց ծննդավայրքն, գերեզմանքն, յիշատակարանքն, գրեանն. կոխած է նա ուր նոքա կոխած էին, երկնած և աշխատած, երգած և ողբացած ուր նոքա ապրած էին։ Ցիրուի ամեն Հայաստանեայ կը տեսնէ այդպիսի բաներ, բայց չտեսներ որպէս Խրիմեան կրցաւ տեսնել։ Հանճարի մարդն, մարգարէական ոգի կրող մարդն ամեն ինչ տարբեր կը տեսնէ ուրիշներէն։ Բնութեան տեսարաններն ամեն մարդ կը տեսնէ, բայց զգօն իմաստասէրն այլապէս կը տեսնէ զայնս։ Ամեն ոք շուշան ծաղիկն կը տեսնէ, բայց Քրիստոս միայն կրցաւ տեսնել շուշանին մէջ փառք և գեղ գերազանց քան զՍողոմոնին։ Խրիմեան կրցաւ տեսնել, չոչափել, զգալ զՀայաստան որպէս ոչ այլ ոք ի Հայոց կրցած էր վերջին դարուս մէջ։ Նա տեսաւ աւերակ Հայաստանի մէջ անցեալ Հայաստանն, և շփուեցաւ հոգւով անցեալ աւագ Հայոց հետ։ Աւերակաց ներքև, հին շինուածոց, տաճարաց և վանուց մէջ կենդանի երևցաւ նմա անցեալն իւր բոլոր մեծութեամբ և փառօք. իբր թէ հին դարերու մէջ իջաւ թափառեցաւ և արքայից, սրբոց և հայրատեսաց հետ խօսեցաւ տեսակցեցաւ։ Հայութեան ոգին, հայկական զգացումն մտրմնացաւ յանձին Խրիմեանի, և եղաւ նա հայութեան բարձրագոյն տիպարն ներկայ ժամանակաց։ Միւս կողմանէ նորա սրբին վերայ ճնշեցին ներկայ Հայութեան աղէտքն իրենց բովանդակ ծանրութեամբ և նա ժամանակակից Հայաստանի կարօտութիւններն բացատրող ներշնչեալ բերանն եղաւ։

Խրիմեան է ներկայ ժամանակի բոլոր Հայոց հայագոյնն։

Է

Ի՞նչ եղաւ Խրիմեանի մեծ, իւրածին, առաջնորդող գաղափարն — այն թէ պարտ է բուն Հայաստանն լուսաւորել, կրթել, վերածնել։ Նոյն ինքն Հայաստանի մէջ ստեղծել տպարաններ, վարժարաններ, թանգարաններ, լուսոյ կեդրոններ.— խաւարի մէջ նստող ժողովրդին յաջորդեցուցանել կրթուած, զարգացեալ սերունդներ.—

բարոյական ոյժերով, իմացականութեամբ և առաքինութեամբ հզօրացուցեալ ժողովուրդ որ քաղաքական զօրութենէ անկեալ է, որպէս զի դիմանայ և ապրի, ազնուանայ և բարձրանայ:

Այդ գաղափար մեծ է, Խրիմեանի որտին մէջ յղացեալ, նորա ուղեղէն ծնեալ և նորա անխոնջ ձեռքերով ոնեալ գաղափարն է այն: Մեսրոպի ժամանակէն ի վեր Հայ մի քան զայդ մեծագոյն գաղափար յղանալ չէր կրցած: Այդ գաղափարի իրագործութեան մէջ է Հայաստանի ապագայն և Հայ ցեղին գալու փառքն:

Ը

Ո՞ւր են սակայն, այն հաստատութիւնք զորս Հայաստանի մէջ հիմնարկեց Խրիմեան: Ո՞ւր են Արծուին վասպուրական և Արծուիկն Տարօնոյ, ո՞ւր են տպարանք ճեմարանք և թանգարանք Վարագի և Ս. Կարապետի:

Մի՛ վախնաք, Հայեր, Խրիմեան վայրապար չէ աշխատած 50 տարի:

Ինչ որ չինեց նա չօշափելի, այժմ չկայ· բայց ինչ որ չինեց նա բարոյական, ինչ որ ներշնչեց նա ի սերունդն նորահաս, կը մնայ, կը տևէ, կը զարգանայ: Նորա մեծ գաղափարին հետևելով է որ Միացեալ Ընկերութիւնք կ'աշխատին կրթութիւն ծաւալել Հայաստանի մէջ: Խրիմեանի ոգին կը գործէ շարունակ Հայ Աշխարհին մէջ: Նորա աշակերտք առաւել բազմաթիւ են քան դուք կարէք թուել· Նորա աշակերտք են ամեն անոնք որք թափանցեալ են նորա մեծ գաղափարէն —թէ պարտ է Հայաստանի ժողովուրդն կրթել:

Խրիմեանի այդ գաղափարն արդէն մեծ ոյժ է· բայց Խրիմեանի ոգին, անձնականութիւնն, կեանքն աւելի մեծ ոյժ մ'է: Խրիմեան մեծ է քան իւր գործքն և քան իւր խօսքն: Յորժամ Բընան իբրև կնքահայր ընկալաւ զՏը Լէսէպս ի Փռանսական ճեմարանն, չնորհաւորեց զնա վասն այն օրինակին զոր մեծ երկաչափն տուաւ չհաւատացող աշխարհի՝ պեղելով Սուէզի ջրանցքն: Ջրանցք զոր բանալու գաղափարն յիմարական համարուած էր և գործնական փորձն ծաղու նշաւակ եղած: Տը Լէսէպս արտակարգ հաստատամտութեամբ սկսաւ և շարունակեց գործն՝ յանձն առնելով ամեն ծաղր, և վերջապէս յաջողեցաւ· իւր յաջողութիւն հաւատոյ խմոր մ'եղաւ մեծագործութեանց մղող:

Նոյն չնորհաւորութիւնն աւելի պատշաճօրէն և աւելի արդարութեամբ կրնամք ուղղել Խրիմեանի որ Եւրոպեան քաղաքակրթութեան ովկիանոսին հետ յարաբերութեան մեջ դնել ձեռնարկեց կղզիացեալ Հայաստանն, և երկարամեայ տաժանաքիրտն աշխատութեամբ, ծաղու՝ զրպարտութեանց՝ և թշնամութեանց տանելով, ի գլուխ հանեց ինչ որ երիտասարդական մեծայուսութիւն կամ անքաղաքագիտի ցնորք կը համարուէր: Անհնարին հնարաւոր գործեց· անյաղթելի համարուած դժուարութեանց յաղթեց, և հաւատոյ հատիկովն արգելքներու լեռներ ի բաց տապալեց իւր շաւղէն: Հայ գործիչին հաւատ ներշնչեց և հրաշազան մեծագործութեանց դար մի բացաւ Հայ Աշխարհին համար:

Խրիմեան հաւատոյ խմորն եղաւ Հայութեան մեծ զանգուածին մէջ և այն ատիճան խմորեց զայն զի անհնար է ո և է զօրութեան ընդ երկնիւք կասեցուցեալ այդ խմորումն: Օ՛, անգէ՛տ է խմորման օրինաց այն կառավարական ձեռն որ զԽրիմեան Վանէն ի Պոլիս և Պոլսէն յերուսաղէմ կը քաշէ կը տանի· ի՛նչ, միթէ հնա՞ր է զԽրիմեան հանել Հայութեան ծոցէն: Խրիմեան չգըտնուիր ուր որ նա մարմնով ներկայ է· նա ներկայ է այժմ ի Հայաստան, Իկիլիկիա, ի Կ. Պոլիս, ի Ռուսիա, ի Հնդկաստան, յԱմերիկա, ի Ճավա և ամեն ուր որ Հայեր կան: Նա ամեն Հայու սրտին մէջ աթոռ մ'ունի բազմելու թէև չբազմի կաթողիկոսական յաթոռ: Ո՞րն է աւելի դիւրին, ո՞րն է աւելի փառաւոր — բազմիլ ի գահոյս հայրապետակա՞ն թէ բոյն դնել ամեն Հայու որտին մէջ· 140 կաթողիկոսունք կրած են Հայրապետական ցուպն սկսեալ Ս. Գրիգոր Լուսաւորչէն, և սակայն յոյժ սակաւք ի նոցանէ ունեցած են հայ ազգին վերայ այն բարոյական հեղինակութիւնն որ ի վեր է քան զՀայրապետականն:

Մկրտիչ Խրիմեան ուրեմն կը հայրապետէ Հայ ազգին յորմէ հետէ նա պաշտելի հայրիկն է եղած բովանդակ Հայութեան· և նորա բարոյական իշխանութիւնն, նորա մեծ գաղափարին առաջնորդող ոյժն պիտի տեւեն ցորչափ ապրի Հայութիւնն: Ոչ մի իշխանութիւն կըրցած է ճշմարտիւ աքսորել զԽրիմեան· ոչ մի զօրութիւն պիտի կրնայ երբէք վերջ տալ նորա ապագայ բարոյական իշխանութեանն: Խրիմեան անմահ պիտի մնայ· նա չկարէ մեռնիլ:

Կեցցէ՛ յաւէրժ Արծուին Վասպուրական·
Յաւէրժ կեցցէ ՀԱՅՐԻԿ ԽՐԻՄԵԱՆ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԳՆԱԾԱՄՆ

Հայութիւնն աշխարհի ամեն կողմ արձակած է իւր ճիւղեր, բայց արմատն բուն Հայաստանի մէջ է· եթէ արմատն չորնայ, Հայութիւնն ամեն ուրեք չուտով կը չքանայ: Այն հայրենասէր որ բուն արմատին հիւթ և կեանք տալ աշխատած է, Հայութեան մեծագոյն բարեկամն է եղած· և այն որ այդ արմատին դրած է կացինն, է Հայութեան ժանտագոյն թշնամին:

Թշնամին ի Տարօն և ի Վասպուրական, Հայկական այդ երկու ներքնագոյն նահանգաց մէջ, եւրոպեան դիտողութենէ հեռու, լերանց վարագուրին ետեւ, կը նահատակէ բուն Հայութեան մնացորդներն: Անդ Հայութեան սիրտն է որ սոսկալի հարստահարութեանց ներքեւ ճնշուած՝ մերթ կը նուադի և մերթ կը տրոփէ, և երբեմն, ո՜հ, կը թուի մերձ ի դադար յաւերժական...:

Այդ նահատակուող ներքին գաւառաց հեծեծանքն արտասահման չեն հասնիր սովորաբար· բայց երբ յուսահատ կատաղութեան վայրկեանն հասնելով զոհն զարնել կը սկսի, նորա հարուածի չկահիւնն աւելի դիւրաւ կը տարածուի հեռուն: Այդ ահաւոր վայրկեան հասած լինիլ կը թուի ի Տարօն, մասնաւորապէս ի Սասուն, և այդ քաջերու ապստամբութեան լուրն, զոր հեռագիրք հաղորդած էին, թղթակցութիւնք կը հաստատեն:

Իրողութիւն է թէ Սասնոյ Հայերն կրկին և կրկին պրիւնայեղ կռիւներ ըրած են թուրք զօրաց և Քրդաց հետ և յաղթող գտնուած են:

Վանէն սպացուած առանձին նամակի մի մէջ կը գտնենք աղեխարշ լուրեր, որք իրաց այս վիճակին լաւ կը համապատասխանեն:—«Պատերազմի շչուկ կայ կ'ըսէ, և մեծ պատրաստութիւն: Նոր կուսակալն բոլոր շրջակայ Քրդերն քաղաքն բերաւ լեցուց: Այժմ դրօշակի տակ են և իրր ձիաւոր զօրք օրն ի բուն կրթութիւն կ'ընեն· դաշտերն խոտ չթողուցին· մինչև անգամ ցանքերըն ալ անխղճօրէն իրենց ձիերուն կը կերցունեն, որով սովի մի վտանգք կը նշմարուին: Սմեն բան սկսած է սղնալ և ժողովուրդն մեծ տագնապի մէջ է:»

Լրագիրներ ծանուցին եւ թէ Թուրքիա մարտանաւերու և թնդանօթներու նոր յանձնարարութիւններ ըրած է Իթալիա, յԱնգղիա և ի Գերմանիա, նաև հունգարացի վաճառականաց հետ խօսք ըրած է որ այս ամառ մի քանի հազար ձի յղեն թնդանօթաձիգ զօրաց համար: Արդէն երկու հազար սնտուկ նոր հրացաններ հասած են ի Կ. Պոլիս:

Թուրքիոյ այս պատրաստութիւնք օտար պետութեան մի հետ պատերազմի բռնուելու մերձաւոր պատահականութեան մի նախատեսութեան չեն կրնար ընծայուիլ: Գոնէ Հայաստանի մէջ եղած քրդային կրթութիւններն և դրօշակի ներքև համախմբումներն յայտնա-

պէս Հայոց համար են

Թուրք կառավարութեան համոզումն այն է թէ ի հեճուկս իւր ծայրայեղ հսկողութեանց, յեղափոխական առաջնորդ մի կրցած է մուտ գործել ի Սասուն, և անդ լեռնցի Հայոց ինքնապաշտպանութիւնն կը կազմակերպէ և նոցա շարժմանց ուղղութիւն կուտայ: Թուրքն կը վախնայ բնականօրէն, մանաւանդ որ աւելի կասկածոտ և վախկոտ դարձած է վերջերս Հայոց նկատմամբ, չատ կը վախնայ թէ Տարօնի ապստամբական շարժումն կը տարածուի ի Վասպուրական ևս, և անզսպելի համեմատութիւններ կ'առնու: Եւ որովհետև քիչ զօրք ունի ներսերն, փութացած է քրդական գունդերն ժողովել և պատրաստ ունենալ զայնս յղելու իբրև կանոնաւոր հեծելազօրք որ կողմ որ հարկ լինի: Արդէն ամեն ոք գիտէր թէ այդ Քրդերն ռուս քօզաքներուն դէմ հանելու համար չէր պատրաստէր Բ. Դուռն, այլ Հայաստանի Հայոց դէմ: Ահա ժամն հասած է:

Հարկ է նաև ծանուցանել թէ այն յեղափոխական առաջնորդն որ յաջողած է թափանցել ի Սասուն, կը վերաբերի Հնչակեան կուսակցութեան, որպէս կ'ըսէ «Հնչակ» ինքն: Թէեւ մեք այդ կուսակցութեան ընկերվարական համոզմանց համամիտ չեմք, սակայն և այնպէս, ինչպէս արդէն առիթ ունեցած եմք յատարարելու, կը կարծեմք զնոսա անկեղծ գործիչներ՝ կարող ի կազմակերպել: Պարտիմք շնորհակալութեամբ հռչակել թէ մեծ բան է խորամուխ լինիլ այն գաւառաց մէջ ուր մեր հէք հայրենակիցք շուարած են առանց առաջնորդի և քաջալերի, և նոցա սիրտ, խրատ և ուղղութիւն տալ երբ ահաւոր ճգնաժամի յուսահատ և կատաղի շարժումներն ընելու վիճակին հասած են:

Այդ կարեւոր շարժմանց մանրամասնութիւններն «Հնչակ»էն համառօտելով կը դնեմք ստորև:

ԾԱՆՐ ԽՌՈՎՈՒԹԻՒՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Մորթուելու գացող ոչխարի պէս տխրամած Հայն Տարօնոյ սկսած է գլուխ վերցունել և մռնչել զերթ առիւծ: Հասնանցի քրդաց և Պուլանըգի Շիրուանչէխ գիւղի Հայոց միջեւ տեղի ունեցած է կատաղի կռիւ մի յորում սպաննուած են 8—9 հոգիք և աւելի շատեր վիրաւորուած են: Կառավարութիւնն վայրապար կը ջանայ կռուին մասնակցող Հայերն գտնել որք անհետ եղած են: Պայրամէն երկու օր վերջ Ս. Կարապետ հռչակաւոր վանքն ինքնին քրդական յարձակում մի կրած է գիշերայն: Յարձակման առիթ տուող բանն քրդաց հին այն անիրաւ պահանջն է որ վանքին միաբանութիւնն ձեռնթափ լինի վանքին պատկանող հողերէն զորս իրենք կը մշակեն վարձք վճարելով: Վանականք արիաբար կը դիմադրեն զինեալ Քրդաց և դուրս կ'արտաքսեն զայնս: Երկուստեք ինկած են մի քանի մեռեալք և 10 վիրաւորք որոց մէջ են երկու տիրացուներ և վանքին գործակատար Զաքարն:

Նոյն օրերն կարեւոր ընդհարում մ'ալ Գղլաղաճ հայաբնակ գիւղի (Մշէն 4 ժամ հեռու դէպ արեւմուտք) և Աղքան գիւղի Քրդաց միջև կը պատահի: Հայերն տեսնելով թէ իրենց աշնցան ցորենի արտերուն մէջ կը մտցնեն Քրդեր իրենց հօտեր, կը բողոքեն, և երբ այդ անլսելի կը մնայ կռուի կը սկսին գաւազանով և դաշունով. բազում վիրաւորներ կը լինին, և Քուրդք, թէև լաւ ևս զինեալ, կը ստիպուին փախչիլ:

Սնձնուտ գիւղի դէպքն աւելի ահաւոր է: Այդ գիւղ 20 տուն Հայերէ և 5 տուն Քրդերէ կը բաղկանայ: Անցեալներն Յակոբ անուն ոմն իւր կնոջ պատիւն պաշտպանելուհամար սպաննած էր իւր գիւղակից մէկ Քուրդ: Յակոբ ձերբակալուած և 15 տարի բանտարկութեան դատապարտուած է, բայց այդ բաւական չհամարելով՝ կառավարութիւնն կ'ուզէ գիւղին բոլոր Հայերն պատժել, ուստի և Քրդերն կը քաջալերուին: Սոքա կը գրաւեն Յակոբի տունն ու տեղն, և կը փորձեն բոլոր Հայերուն հողերն ևս բռնի գրաւել: Մշոյ միւթասարրիֆն խեղճ Հայերուն աղերսագիրն պատռելով ետ կը յղէ: Սնձնուտցիք յուսահատ կը վերադառնան ի գիւղ և զինեալ Քրդերուն հետ կատաղի կռիւ մի կը սկսին, բայց չարաչար կը ջարդուին, կենդանի մնացեալք ալ մաղապուր կը փախչին. Այսպէս Սնձնուտ գիւղ բոլորովին Քրդաց ձեռքն կը մնայ:

Գանք Սասնոյ այն կարեւոր դէպքերուն որոց առթիւ հեռագրական լուրեր տեսնուեցան օտար լրագրաց մէջ թէ Հայեր ապստամբած ի Սասուն և յաթած են Թուրք զօրաց:

Այդ դէպքերէն առաջ մի քանի վաչտ ոստիկանզինուորներ կը գտնուէին Սասնոյ այլ և այլ կողմերն այսինքն ի Շատախ, Գաւառ, Խուլփ, Խիան և Խարզան, և ի խնդիր էին Հնչակեան գործիչի մի, որոյ հոտն առած է եղեր կառավարութիւնն: Ոստիկան-զինուորաց գլխաւորք, Թալիպ, ՀաճիՍէֆիմ և Բէչիր Էֆէնտիք, ամեն հնարաւոր միջոց գործածելով վրիպեցան զՀնչակեանն գտնելէ կամ գոնէ անոր համակրող համարուող գիւղապետներն ձերբակալելէ: Ուստի յարձակեցան ցիր և ցան գտնուող անպաշտպան տներու վերայ և ձերբակալեցին հինգ չինականներ: Ասոնցմէ Միրիսօ անուն անձն ծեծի տակ փորձութեան չդիմանալով յայտնեց թէ քանի մի անծանօթ անձինք այն կողմեր անցած էին և տեսակցութիւններ կը կատարէին: Նաև կ'ըսէ թէ իւր հետ ձերբակալելոց մէջ տեղեկագոյն անձն է Աղօ:

Ի սկզբան անդ Մայիսի է որ Սէմալ գիւղի Ըռքոյի (Առաքել) տան մէջ Թալիպ էֆ. և 30 ոստիկանք կը ձեռնարկեն զԱղօ տանջել՝ զայն ի խոստովանութիւն դաղտնեաց բռնադատելու համար: Հոն Թրքաց անգութ դաղանամտութիւնն ինչպէս նաեւ Աղօյի արտակարգ ա. ռիւթիւնն ի հանդէս կուգան: Գիշերային խոր լռութեան մէջ կը սկսի տանջանքն: Նախ միւս չորս ընկերներն կը ծեծուին, և ոչ ինչ չգիտնալով կամ չըսելով կը հեռացուցուին: Ծեծն բաւ չհամարելով Աղօյի համար կը մերկացուցեն զնա և երկու ոտքերէն մինչև ցանութսը մէկ մէկ ձող հաստատելով երկու ծայրերէն կը կապեն, ապա թեւերն տարածելով՝ գրկաչափ երկայնութեամբ ձող մի մէկ ձեռքէն ցմիւսն հորիզոնական ուղղութեամբ կը դնեն կը կապեն: այսպէս իբր թէ ի խաչ կը հանեն զնա, և յայնժամ ճիշդ ինչպէս որ է կը կապեն սեան և կը սկսին հարուածներ տեղալ անխնայ. Զոհն չէր կրնար խլրտիլ, միայն խարազանի հարուածոց տեղերն կապոյտ գծեր կ'երևէին և դէմքն ցաւի ահռելի պատկեր մի կը դառնայր: Հէք նահատակն կ'աղաղակէր որ զինքն գնդակահար սպաննեն-փոխանակ չարչարելու, և տեսնելով թէ կը շարունակեն, կը սկսի գլուխն (միակ շարժելու ազատ մասն) սիւնին զարնել շուտով մեռնելու փափաքով: Ոստիկանք կը զսպեն գլուխն: Նորէն-հարցումներ, և նորէն նոյն պատասխան թէ ինքն ոչինչ գիտէ և ոչ ինչ կարէ յայտնել: Թալիպ յայնժամ աքցան բերել կուտայ և ակռաներն քաշել կը սպառնայ. Աղօ հաստատ կը մնայ: Ակռաներն թողլով կը սկսին մաղխիլով ընչացքն փետել: Վերջապէս խարել կ'որոշեն զոհն: կրակին մէջ կը կարմրցուցեն ակիշ մի և կը դնեն Աղօյի երկու թաթերուն վերայ, ապա նոյնպէս կը խարեն կուրծքն: Նահատակն առաւել քան միանգամ կը նուազի խարման պահուն:

Առաւօտուն կանուխ ոստիկանաց ձեռօք Թալիպ կը յղէ ձերբակալեալներն ի Մուշ Կիսամեռ Աղօն ձիուն կապած կը տանին

Աղօյի նահատակութեան լուրն տարածուելով՝ հայ և Թուրք ժողովուրդք կը ցնցուին և վրէժի ձայներ կը լսուին: Սասունցիք կաղաղած՝ կը սկսին նորօրինակ արութեամբ դիմադրել, գարնել, կռուիլ, և վերջն իրենց

գիւղերու մէջ կ'ամրանան։ Այդ դրից մէջ կը կենան նոքա պատրաստ դիմադրելու եթէ զինուորներ գան ձերբակալոութիւն ընելու նպատակաւ։ Խուլփայ Կէլիէկէնման և Կէլիէմսուր գիւղերու բնակիչք զգուշութեան համար կ'երթան աւելի մեծ գիւղերու հետ կը միանան։

Ոստիկանաց վաշտեր չհամարձակելով այդ մեծ գիւղերու վերայ յարձակիլ, կը սկսին ասա անդ տկար և անպաշտպան ղոհեր փնտռել։ Հազզօ գաւառակի գայմագամն հարիւր ձիաւորով Շատախի Աղբիկ գիւղի մօտէն անցնելով ելը տեսնէ թէ գիւղին գչխաւորներէն Խչոյի գառնուկներն շատ են քան ղոչխարներն, ատկէ կը հետևցունէ թէ ոչխարահամարի ատեն նա պահած լինելու է սչխարաց մէկ մասն, և կը ձերբակալէ զնա։ Զինուորաց մեկնելու պահուն գիւղին մէջ հաւար կ'իյնայ· կարիճներն բազմութեամբ կը պնդին զհետ, և ահագին կռիւ մի ընելով կը փախցունեն գայդագամն և զինուորներն, և կազատեն ձերբակալեալն։

Նոյն ժամանակներն կռիւ մ'ալ կը պատահի Կէլիէկիւզէն գիւղի Սլիանցիք կոչուած թաղին մէջ, որ գիւղէն մէկ ժամ հեռի է։ Ընդհարումն Հայոց և ոստիկանաց միջեւ տեղի կ'ունենայ և Սասունցիք կը տանին յաղթանակն։ Երրորդ մեծ կ'ռիւ մալ դարձեալ Կէլիէկիւզին մօտերն կը պատահի։ Ոստիկանք ճամբուն վերայ կը ձերբակալեն վերեւ յիշուած Մրխոյի եղբայր Կըրպօն և հօրեղբայրն Ստեփան։ Գիւղացի մի այս դէպքին լուրն գիւղացւոց կը հաղորդէ իսկոյն, և քաջ գիւղացիք ճեպելով ոստիկանաց ետեւէն կը սկսին կռուի, և ձերբակալեալներն ազատելով կը վերադարձունեն իդիւղ։ Թալիպ այս դէպքերու վերայ տխրած և ակռայ կրճտելով կը դառնայ ի Մուշ։

Կառավարութիւնն իրաղեկ է թէ Սասնոյ այս շարժումնք յեղափոխական կազմակերպութեան մառաջնորդութեամբ կը կատարուն, ուստի և իբրև ապստամբ երկիր այդ երկու գաւառներն պաշարման վիճակի մէջ կը դնէ, անոնց հետ ամեն յարաբերութիւն կ'արգելու։ Կ'ըսուի թէ թնդանօթաձիգ վաշտեր ուղուած են եւ արդէն ճամբայ հանուած են դէպ ի Սասուն; Հաւանական է որ քիչ ատենէն պատերազմի նման կռիւներ տեղի ունենան։

ՏԱԼԻՈՐԻԿՅԻ ԿՏՐԱՄԻ

ԲԱՑԼԵՐԴԸ

Տալւորիկցի կարիճ եմ խորթ,
Քաղքցու պէս չեմ թուլամորթ·
Սարի զաւակ, քարի որդի,
Հին քաջ Հայոց եմ մընացորդ։

Տալւորիկի զաւակ եմ քաջ,
Չեմ խոնարհիր թուրքին առաջ·
Քարատ լերանց ես ազատ լամ,
Չեմ տեսեր ո՛չ արօր ո՛չ մամ։

Հա՛յ ախպրտիք, վա՛յ ախպրտիք,
Տալւորիկի զաւակ եմ քաջ,
Ազատութեան սիրուն համար
Եկէք դէպ ինձ, յառա՛ջ, յառա՛ջ...

Երբ իմ աչեր բացի յաշխարհ,
Ազատ տեսայ մեր սար ու քար,
Մինչեւ փակեմ աչքս ի խաւար
Պիտ չը կոխէ հոս ոտք օտար։

Իմ մամ ծնաւ զիս թալերու ծոց,
Ինձ ընկուզ կոճ մ'եղաւ օրրոց,
Տկլոզ ծընած՝ մեծցայ տկլոզ,
Կեանքիս բաժինն է կռիւ ու բոց։

Հա՛յ ախպրտիք վա՛յ ախպրտիք եւն·

Ոտքս բոկիկ, սիրտս միշտ բաց,
Ի՛նչ փոյթ թէ քոյրս ալ մերկ մընաց,
Իմ մօտ մէկ է արեւ, բուք, ցուրտ,
Բա՛ւ է չիշխեր հոս թուրք կամ քուրդ։

Իմ կեանքս խիստ է և չարքաշ,
Փափուկ կեանքի վայլից չեմ վարժ,
Բնակարանս է ապառաժ,
Ընկերս մրրիկ ու երկրաշարժ։

Հա՛յ ախպրտիք, վա՛յ ախպրտիք եւն·

Հաւա՛ր ինկնի՝ երթամ առաջ,
Սասնոյ լերինք հանեն հառաջ,
Հառաջ հանեն և ներկըւին
Իր կըտրճի արիւնով քաջ։

Կըտրճի՛ս սիրտ, կըտրճի՛ս ձեռք,
Ի՛նչ փոյթ քաջիդ հաղար-մէկ վէրք—
Մէկ հարուածին կուտաս հարիր,
Ակռաւին լէշ կանես հազիր։

Հա՛յ ախպրտիք, վայ ախպրտիք եւն·

Այծեամի պէս կը ցատկրտես,
Առիւծի պէս կը մրընչես,
Ծովու մը պէս կը փրփրես
Կայծակի պէս կը հարուածես։

Կըռւի դաշտը բաղդն է կեանքիդ,
Հոն պիտ կարմիր արշալոյսը
Կամ աւետիս տայ դրօշակիդ,
Կամ պաղ տեսնի քո երեսը։

Հա՛յ ախպրտիք, վա՛յ ախպրտիք եւն

Ծան.— խորթ(երիտասարդ), թալ(քարայր), ճեք(զէնք)
Արտատպեալ «Հնչակ»էն

«ՀՆՉԱԿ»

Կը հրատարակուի ամիսն միանգամ

Յօդուածներ, թղթակցութիւններ և տեղեկութիւններ ուղարկել հետեւեալ հասցէով·—

Athenes (Grece.) M. Beniard. Poste restante.

Իսկ դրամական մանդաներն ուղարկել հետեւեալ հասցէով·—

Eaux-Vives. (Suisse).— M. Daniel. Poste restante.

«ՀԱՅՐ»

Կրնայ պատահիլ որ դիւղազնացութեան պատճառաւ թերթիս յառաջիկայ երկու թիւերն միանգամայն հրատարակուին, որով և յապաղում մի տեղի ունենայ բացառօրէն։

ԱՌԱՆՑՆԵՐ

—Որ յանդիմանէ համարձակութեամբ, առնէ զխաղաղութիւն։

—Որ ի չրթանց բղխէ գիմաստութիւն, իբրև գաւազանաւ հարկանէ զայր անմիտ։

—Փախուցեալ է ամպարիշտն առանց ուրուք հալածելոյ, իսկ արդարն՝ իբրև զառիւծ յանձնապաստան է։

ՍՅԼ ԵՒ ՍՅԼԲ

Անցեալ Յունիս 26ին Իզմիրլեան եղբարց վաճառատան հաստատման հարիւրամեայ տարեդարձն տեղի ունեցաւ Ղզլարի մէջ ի Կովկաս։ Իզմիրլեան եղբարք 1872 թուականէն սկսեալ մինչև այսօր պատուաւորապէս շարունակած են գինեվաճառութիւնն իբրև Ռուսիոյ առաջնակարգ վաճառականներ։ Իզմիրլեանց բարեգործութեանց երկար ցանկին մէջ հանրածանօթ է Սահակ—Մերոպեան մրցանակն։ «Արծագանք» կը յիշէ թէ Իզմիրլեանք ոչ միայն ռուսական պատուաւոր քաղաքացւոյ ցուցակն մտնելու արժացած են, այլ և զանազան ցուցահանդէսներու մէջ նշանադրամներ ստանալու պատիւն ունեցած են(Փարիզ 1889, Ալճէր, Պրուքսէլ եւն.։

Յունիս 12 ին ի Թիֆլիզ տեղի ունեցաւ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան տասներորդ տարեդարձն։ Հայ կանանց անդրանիկ միութիւններէն մին է այդ ընկերութիւն։

«Արծագանգ»էն կ'իմանամք թէ տիեզերահռչակ նկարիչ Այվազովսկի օգոստոսի կիսին կը մեկնի ռուսիայէն և կուգայ մասնակցելու Շիքակոյի ցուցահանդէսին։

Նաշուա, 25 Յուլիս 92

...Խմբագիր.— Քաղաքիս երկաթի գործարանին մէջ բաւական հայ երիտասարդներ կ'աշխատին։ Երկու օր առաջ դէշ Իռլանտացի գործաւոր մը յանիրաւի կըռուելով վնասեց մեր հայրենակից Ակոբ Մակարեան Խուլուցիին։ Կառավարութեան բողոքեցինք, և կառավարութիւն բռնեց բանտարկեց Իռլանտացին և 14 թալէռ տուգանք առնլով տուաւ մեր հարստահարեալ եղբօր։ Այդ պայմանաւ ազատեցաւ չարագործն։ Յ. ՊՕՅԱՃԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

Constantinople Bazaarի (Բոնսթանթինոփլ Պազար) մէջ ունի թրքական մեծաքանակ ձեռագործներ (embroidery) գորգեր (խալի), ուրիշ զանազան Թուրքիոյ ապրանք, և կը ծախէ դիւրագին գներով այն Հայերու որք կ'ուզեն ամարանոցներն և այլ տեղեր երթալ վաճառականութեամբ, և անոնց ևս որք կ'ուզեն ընծաներ տալ իրենց բարեկամներուն և գործարանապետներուն։ Թէ ապրանաց հարազատութեան և թէ գներու չափաւորութեան մասին կրնամք կատարելապէս վստահեցունել մեր Հայրենակիցները, ինչպէս արդէն շատեր փորձով գիտեն։

Մինչ Սեպտեմբեր հասցէս է—
15 Grand Central Block, Saratoga Springs N. Y.

THE WORCESTER MECHANICS SAVINGS BANK
311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԷՆԻՔԻ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կըրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը վճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսոց կէսէն հաշուելով։

REGULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.
A RELIABLE REMEDY FOR
Indigestion, Biliousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.
Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.
Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address
THE RIPANS CHEMICAL CO.
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.
Ripans Tabules cure headache.
Ripans Tabules cure constipation.
Ripans Tabules : for liver troubles.
Ripans Tabules : a family remedy.
Ripans Tabules : for sour stomach.

Հայե՛ր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ոևէ արական հանդերձեղենի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ ժան։

HAGOPIAN
PHOTO-ENGRAVING CO
3 Great Jones St. New York
Engraving for all purposes of illustration in line & half-tone.

N. DESCHAMPS
Ն. ՏԷՇԱՆ

Վուսթըրի Main (Մէյն) փողոցին 259դ թիւ խանութը դիմացկուն և ժան կօշիկներ և մոյկեր կը վաճառուին։ Պարոն Տէշան շատ քաղաքավար և պարկեշտ գործ ընող մէկն է և ամեն այցելու իրմէն գոհ կը մնայ։ Փորձէ և պիտի համոզուիս։

P. SHALJIAN
9 SPRUCE ST. NEW YORK
ԳՐԲԵՐ ԵՒ ՏԵՏՐԱԿՆԵՐ ԿԸ ԿԱԶՄԵՆՔ
ԳԻՆ ՁԱՓԱՒՈՐ
ԿԱԶՄ ԸՆՏԻՐ

MARK F. COSGROVE
ԿՈՇԻԿՆԵՐ, ՄՈՅԿԵՐ ԵՒ ԸԸՊՊԸՐՆԵՐ
78 Front St., Corn Bigelow Court
WORCESTER MASS.

Այս է ամենէն աղէկ խանութն Վուստըրի մէջ, ուր կրնաս գնել ամեն տեսակ կոշիկներ մոյկեր, և կոշիկի ըզպպըրներ։ Հրամէ եկուր անգամ մը և տես թէ ինտոր լաւ ընդունելութիւն կուտանք մեզ այցելող Հայերուն։

LANTELME'S
HOTEL & RESTAURANT,
40 UNION SQUARE NEW YORK CITY
16 և 17 րդ փողոցներու միջև արևելեան կողմն։
—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—
Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

BUSH & CO
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.
ԳԵՂԱՊԻՐՔ
(Հաստատեալ ի 1849)
56 FRONT STREET WORCESTER, MASS.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

PHARMACIE FRANCAISE,
NORBERT FRANCK.
311 7th AVENUE, NEW YORK.
Դեղագիրք կը պատրաստուին խնամով

— «ՀԱՅԲ»ի 1891 տարին ամբողջ կապուած կը ծախուի 2 թալէռ 5 սէնթի։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ